

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ՌՈՒԻԲԵՆ, Ստալինեան Սահմանադրութիւնը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը — Մատենաշար «Յուսարեր», թիւ 32, Գահիք, 1936.

88 էջնոց այս գրքոյկը մի փորձ է, պարզելու ընթերցող լայն հասարակութեան, Ստալինեան Սահմանադրութեան եւ Հ. Յ. Դաշնակցութեան ենուաղընդած նպատակների ու տեսակետների տարրերութիւնը։ Գիտական լուրջ գործ չէ, բնականարար։ Հեղինակը աշխատել է հանրամատչելի, ժողովրդին հասկանալի խօսիերով ցոյց տալ, քեզ ի՞նչ է նոր սահմանադրութիւնը, քեզ որքան նա «կը գնայ զանգաւծների ցանկութեան համաձայն, քեզ ո՞քան ան համապատասխան է մեր գոտումներին, եւ քեզ այս դրութեան հանդեպ ինչքա՞ն կողմ ենք եւ ինչքա՞ն հակուակի»։ Եւ յօդած առ յօդած զուգադրելով՝ համեմատում է Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի հետ։

Ասել քեզ փորձը յաջողւած է՝ կարելի չէ։ Արդէմ համեմատութեան իմբը յաջող չէ ընտրած. — մի կողմ պետական սահմանադրութիւն, միւս կողմ՝ կուսակցական ծրագիր։ Անջուշտ, կուսակցական ծրագիրները արդէմ իսկ իրենց մէջ պարունակում են պետական սկզբունք, բայց անհաժեշտարար ընդհանուր, յաճախ, տեսական բնայրով, մինչդեռ պետական սահմանադրութիւնները բանձացեալ ու գործնական կետեր են տալիս։

Ցեսոյ, Ռուբենը բալորովին ամսեան է մի հիմնական պարագայ. Խոր-

իրդային իրաւագիտակցութեան համաձայն, պետական իշխանութիւն է նաև Համայնավար կուսակցութիւնը, եւ աւելի բարձր իշխանութիւն, բան կառավարութիւնը կամ օրենսդիր գերագոյն ժողովները։ Մյուլ է խորհրդային իշխանութեան դրական կամ բացասական յատկութիւնների մասին դատել միայն պետական սահմանադրութեան նիման վրա, անհրաժեշտ է առնել եւ Համայնավար կուսակցութեան պետական դեր. ի՞նչ արժէք ունի սահմանադրութեան ապահնությունացումը, երբ Համայնավար կուսակցութեան իշխանութիւնը կառուցած է խիստ կենուրանցման հիմքներով։ Գործնական ի՞նչ հշանակութիւն կարող է ունենալ Անդրկովկասեան Հանրապետութիւնների «անկախութիւն»-ը, երեք իր ուժի մէջ է մնալու Համայնավար կուսակցութեան նրկային կոմիտէն, Թիֆլիսում, կամ սրան համապատասխան մի իշխանութիւն։

Միւս կողմից, գրքոյկի մէջ ֆիշ չեն, մասնաւծապատ եւ դժւար հասկանալի արտայայտութիւններ, վիճելի ու երթեմն տարօրինակ կարծիքներ եւ նոյն իսկ փաստական սխալներ, որոնք չեն կարող շփոր ու տարակուսամբ չառաջցմել անփորձ ընթերցողի մտքում։ Ժողովրդի լայն խաւերին յատկացւած գրքի գրւածքից պահանջող առաջին

պայմանը նրա մէջ արծարծւած գաղափարների յստակութիւնն ու պարզութիւնն է: Ինչ որ իր հերքին պահանջում է, որ հեղինակն էլ հիմնաւոր ու ձևակերպւած մտքիր ունենայ:

Ներկայ գրախոսականի առիթը, սակայն, գրեյլի այս կողմը չէ յաջող կամ անյաջող, ինդինակը, ըսդհանուր առմամբ, նիշտ եղակացութիւններ է հանում Ստալինեան Սահմանադրութեան կէտերից: Ինչ որ առանձնապէս ուշագրաւ է, այդ գրեյլի «Խախարան»-ն է, ուր Ռուբենը պարզում է իր տեսակէտը յեղափոխութեան եւ բոլշեվիզմի մասին: Նրա ասելով՝ «բոլշեվիկեան յեղաշրջումը եւ Լենինեան վարդապետութեան տիրապետութիւնը Ռուսիոյ մէջ ու ամոր ազդեցութիւնը միջազգային ասպարիզում, եղած են արդիւնքը Ռուսիոյ ննշչած դասակարգերի եւ ժողովուրդների տառապանքների եւ մասամբ ալ արտաքին ժաղակական ազդեցութեանց, որոնք նպաստած են յեղափոխութեան ծայրայեղ զարգացման»:

Յետոյ. «Ռուսաստանի մէջ տիրող անարդարութիւնները, քառոր եւ բնուրիթիւնները զանգածների մէջ հոգիկան ոյժ ստեղծած էին յեղափոխութեան համար, ինչպէս վառօդը՝ բնդամօքի: Գերմանական կենտրած կառախումբով նոմրորդոյ Լենին, Թրոցքի *), Զինվիել եւ այլք եղան այն պատրոյզը, որ պայքեցուց այդ ամբարտած վասոյը»:

Այս ոգով է կազմած ամբողջ «Խախարան»-ը: Եւ դաւս է գալիս, որ հոկտեմբերեան յեղաշրջումը բնական արդիւնք էր Ռուսաստանի ընկերային

ժաղական կեանքի զարգացման, որ բոլշեվիկները հարազատ ծնունդն էին ուսական միջավայրի եւ որ, «ինչպէս արձակւած գնդակը, կամ ժայթող հըրարուխը անհնար է կանգնեցնել, այնպէս ալ անհնար է կանգնեցնել ժողավրդական պահանջն ըեղադրւած յեղափոխութիւնները», այսինքն՝ ներկայ դէպում, բոլշեվիկեան յեղափախութիւնը:

Ռուբենը բնական է համարում, հետեւարար, եւ արդարացնում է բոլշեվիզմը, միայն գտնում է, որ նա ծայրայեղութեան է գնացել: Մեր դերը այդ ծայրայեղութիւնների դէմ պայքարելն ու շտկումներ կատարելն է: «Մենք բոլշեվիկների քշնամի ենք ոչ քեզ իրեն դասալիազ, իբր հակայեղափոխական, այլ իբր ժաղակական ըլցնամի, նպատակ դնելով, որ յեղափոխութիւնը հասնի իր վերջնական հանգրանցնեն:» Մի ժիշ նրբին է, անշուշտ, բայց այսպէս մտածելով՝ նա արդէն սկսել է տատանել բոլշեվիզմի վերաբերմամբ: «Մենք ընկերվար յեղափոխական ենք, այդպէս լինելով դէմ եղած ենք եւ ԵՐԵՒՆԻ կը լինենք բոլշեվիկ ընկերվարականներին»: (Ընդգծումը մերն է... Ս. Վ.): Ինչո՞ւ՝ «Երեխի» ...

Այն ինչ, Հ. Յ. Դաշնակցութեան տեսակէտը բոլշեվիզմի ու հոկտեմբերեան յեղափոխութեան մասին եղել է եւ է նիշտ հակառակը: Հ. Յ. Դաշնակցութիւնը կարծում է, որ Ռուսաստանի զարգացման բնական պայմաններին աւելի համապատասխան էր 1917 թվետրաբեան յեղափոխութիւնը եւ նըրանից բխող իշխանութիւնն ու կարգերը, որոնց տրամաբանական ենտեւանին էր բոլշեվիկեան սիմենտը ըբրւած Սահմանադրի ժողովը: Բոլշեվիզմը ծնաւնդ էր պատերազմի ամբոխանոն վիճակի եւ արտաքին զործումների

*) Թրոցքին Լենինի եւ Զինվիելեւ հետո, «կենտրած կառախումբով» չի մըտել Ռուսաստան: Նա Ռուսաստան վերադարձաւ բոլորովին տարբեր պայմաններում:

— «կմիւած կառախումք» — եւ յաղ-քանակեց բռնութեան ու արտաքին ազդակների աջակցութեամբ։ Բոլշեվիզմը եկաւ իրեւ հսկայեղափոխութիւն, — արտաքին սիմեների օգնութեամբ խորտակեց յեղափոխական իշխանութիւնը եւ բռնութեամբ պարտադրեց իր կամքը։ Եւ այս 20 տարւայ ըմբացքում բոլշեվիզմը տիրել է հակառակ ժողովրդի ննջիչ մեծամասնութեան կամքի եւ հակառակ նուսաստանի ընկերային՝ տնտեսական պայմանների քելադրանքի, սույն մերկ բռնութեան վրա յենած։ Հետեւարար, բոլշեվիզմը չի կարող չնկատել «արդիւնք նուսիոյ նընշած դասակարգերի եւ ժողովուրդների տառապանքների», այլ՝ արդիւնք պատերազմի ստեղծած հիւանդագին պայմանների, արտաքին ուժերի միջամբ տուրեանց եւ ներքին բռնութիւնների։

Այս է եղած եւ այս է Դաշնակցութեան ըմբառումը բոլշեվիզմի մասին։ Այդպէս է հասկացւել բոլշեվիզմը խորհրդային իշխանութեան առաջին շրջանում, այդպէս է հասկացւում եւ այժմ։ Աւ Շահխաքունեանից ու Վ. Խորենից սկսած մինչեւ Մ. Վարանդեան՝ այդպէս են ըմբռնել ու ներկայացրել բոլշեվիզմը։ Նոյն իմաստն ունի եւ Հ. Յ.

Դաշնակցութեան գերագոյն ժողովների բանաձեւերը։ Հիմա առաջարկում է նոր ըմբռնում — բոլշեվիզմի արդարացումը...

Սա մի փոքր է Հ. Յ. Դաշնակցութեան բոլշեվիզմի մասին ցարդ ունեցած վերաբերումի վերագնահատութեան — սխալ քէ ըստ ձեւի եւ քէ ըստ էութեան։ Ըստ ձեւի՝ այդ փոքրի տեղը բրոշիւրային գրականութիւնը չէ։ Ըստ էութեան՝ երկ բոլշեվիզմի գոյութիւնը արդարացնում է նուսաստանում, ինչո՞ւ չպէտք է արդարացնի եւ Հայաստանում։ Ինչ է նուրէնի վերագնահատութեան իիմքը — խորհրդային իշխանութեան երկարատեւ գոյութեան փաստը։ Նման փաստով կարելի է արդարացնել ամէն բռնապետութիւն։ Արդիւ Համբիդի իշխանութիւնը 30 տարուց աւելի չտեւեց... Նոյն արամարանութեամբ կարելի է արդարացնել եւ Հայաստանի բոլշեվիզմի գոյութիւնը։ Այստեղից՝ մէկ քայլ գէպի Քաջազնունին։ «Բոլշեվիկները մեր բնական ժառանգներն են»...

Դաշնակցութեան տեսակետը նիշտ դրա հակառակն է։

Ս. Վ. Բ.

ԳԱՐԵԳԻՆ ԵՊ. ՏՐՍ.ՊԻԶՈՆԻ — ԽՍ.ՉԱ.ՏՐԵԱՆ՝ «Աշխարհի լոյսն ի հայս կամ Աւետարանի լոյսը Հայաստանեայց Եկեղեցւոյ պրիսմակէն» — Ա. հատոր, Փարիզ, 1936.

Ցառաջարանի մէջ հեղինակը այսպէս է ձեւակերպում իր աշխատութեան նըսպատակը՝ «ներկայ համեստ ձեռնարկը նպատակ ունեցած է քրիստոնէական կրօնի ազգայնացած կամ հայացած, բայց ո՛չ համարդկային իր կենդանի շունչէն դատարկւած ռգին ցալացնել

մեր ազգային — եկեղեցական պատմութենէն քաղաքաւ դէմքերու եւ դէպքերու նկարագրութամբ եւ ասոնց վրա լոյս արձակող աստւածաշնչական հատւածներու վերլուծմամբ։ Փոքր եղած է տալ հայ — քրիստոնեայ տիպարնկարագիրը՝ իր ամեատական եւ ընկե-